

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դավաթյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. Նախագծի 1-ին հոդվածում «բովանդակությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «խմբագրությամբ» բառով՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

2. Նախագծով նախատեսված սահմանափակումները հիմնավորման կարիք ունեն՝ հաշվի առնելով, որ դրանք կարող են անհարկի սահմանափակել օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում համապատասխան մարմինների հետ որոշակի կատեգորիայի անձանց համագործակցության շրջանակը, ինչը կարող է խոչընդոտել հետախուզական և հակահետախուզական գործունեության իրականացմանը և նվազեցնել հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետությունը:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում ներկայացված նախագիծը քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին**

Հոդված 1. «Օպերատիվ-Հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ ՀՕ-223-Ն օրենքի /այսուհետ` օրենք/ 12-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ`

«3. Օպերատիվ-Հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններն իրավունք չունեն Օպերատիվ-Հետախուզական գործունեության նախապատրաստմանն ու անցկացմանը որպես համագործակցող անձ ներգրավելու`

1/ պատգամավորների

2/ կառավարության անդամների

3/ Սահմանադրական դատարանի անդամների

4/ դատավորների

5/ մարդու իրավունքների պաշտպանին

6/ Վերահսկիչ պալատի նախագահին

7/ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահին

8/ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին

9/ Կենտրոնական բանկի նախագահին

10/ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահին

11/ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահին

12/ մարզպետների

13/ համայնքի ղեկավարների

14/ համայնքի ավագանու անդամների

15/ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գործող կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների

16/ Ազգային անվտանգության մարմինների, ոստիկանության, զինված ուժերի աշխատակիցների, քրեակատարողական ծառայողների, բացառությամբ օրենքով սահմանված կարգով իրականացվող հակահետախուզական գործունեության իրականացման նպատակով ներգրավման, ինչպես նաև

դատախազության եւ այլ Օպերատիվ-Հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների
օպերատիվ ստորաբաժանումների աշխատակիցների»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող
տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Օրինագծի ընդունումը պայմանավորված է Օպերատիվ-Հետախուզական գործունեության
արդյունավետության մեծացման անհրաժեշտությամբ:

Օրինագծի մշակմանը մասնակցել են իմ օգնականներ՝ Արմենուհի Սաղաթեյանը եւ Երվանդ
Դավաթյանը: